ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 94

«03» 11 2022 թ. ք. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազ Ռաֆայել Բագրատի Երիցյանին ՀՀ գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի պաշտոնին նշանակելու և վարչական շրջանի դատախազի պարտականությունների կատարումը նույն վարչական շրջանի դատախազի տեղակալ Արսեն Գագիկի Կոստանդյանի վրա դնելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի նոյեմբերի 1-ի՝ համապատասխանաբար N 403-Ա և N 408-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է կատարել վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Ռ.Երիցյանի կողմից՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Ա.Կոստանդյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Բաղդասարյան Գևորգ - ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ

Հանձնախմբի անդամներ՝

Փիլիպոսյան Հովհաննես -	Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության ավագ դատախազ,
Մարտիրոսյան Հայկ -	ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ,
Նազարեթյան Արմինե -	ՀՀ դատախազության արխիվի բաժնի պետ,
Ղահրամանյան Մարուշ -	ՀՀ դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար,
Գևորգյան Թամարա -	ՀՀ դատախազության առաջին բաժնի պետի պաշտոնակատար,
Մուրադյան Փիրուզա -	Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության տարածքային բաժնի ավագ մասնագետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2022 թվականի նոյեմբերի 14-ը:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ